

Տ. ԽԱԺԱԿ ԱՐԶԵՂԻՄԿՈՂՈՍ ՊԱՐՍԱՄԵԱՆԻ ՆԱԼԴԻՊՈՒՄԸ ՅՈՒՆԱՅ ՏԻԵՋԵՐԱԿԱՆ ՊԱՏՐԻԱՐԷՆ ՆԵՏ

Յոյն Ուղղափառ Եկեղեցւոյ Պարթոլեմիոս Տիեզերական Պատրիարքը մէկ շաբթուան այցելութեամբ Թուրքիայէն ժամանած է Նիւ Եորք: Այս պաշտօնական այցելութեան առիթով՝ Նիւ Եորքի Յոյն Ուղղափառ Եկեղեցւոյ Առաջնորդարանը նախաճաշ-հանդիպում մը կազմակերպած էր՝ հրաւիրելով Ուղղափառ եւ Արեւելեան Ռոդափառ Եկեղեցիներու հոգեւոր առաջնորդներ՝ թիով 50:

Այս հանդիպումը տեղի ունեցաւ Երկուշաբթի, Մարտի 25-ի առաւօտուն:

Տիեզերական Պատրիարքը իր խօսքին մէջ շեշտեց կարեւորութիւնը միջեկեղեցական շարժումին եւ ըսաւ. «Մեր նպատակն է վերահասարարել Քրիստոնեայ Եկեղեցւոյ միութիւնը»: Ան գնահատանքով արտայայտուեցաւ Արեւելեան Ուղղափառ Եկեղեցիներու Խորհուրդին, որուն արեւնապետն է Արեւելեան թեմի առաջնորդ Գերշ. Տ. Խաժակ արքեպս. Պարսամեան, եւ Ուղղափառ Եկեղեցիներու Խորհուրդին, որուն արեւնապետն է Տիկիթրիոս եպիսկոպոս, կատարած միացեալ ջանքերուն եւ յառաջ փարտող երկխօսութեանց:

Գերշ. Տ. Խաժակ արքեպս. Պարսամեան իր խօսքին մէջ ըսաւ. «Ուղղափառ եւ Արեւելեան Ուղղափառ Եկեղեցիներու յարաբերութիւնները բարձր մակարդակի վրայ են ազգային եւ միջազգային գեւորի վրայ: Տեղական շարժումը ցոյց կու տայ որ նոյն հաւարքը ունեցող քրիստոնեաները մէկ գմէկու հետ կրնան հաղորդակցութեան մէջ ըլլալ: Այն բաները, որոնք մեզ կը միացնեն, մեծ են. իսկ մեզ իրարմէ բաժնող հարցերը թող ջնջին: Մենք աշխատանք կը փնտրենք լուծելու մեզ իրարմէ բաժնող հարցերը եւ հասարակելու մնայուն հաղորդակցութիւն»:

Նախաճաշի աւարտին՝ Գերշ. Տ. Խաժակ արքեպս. Պարսամեան առանձին հանդիպում մը ունենալով Տիեզերական Պատրիարքին հետ՝ անոր փոխանցեց Ամենայն Հայոց Կաթողիկոս Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ.ի ջերմ ողջոյնները: Տիեզերական Պատրիարքը խնդրեց առաջնորդ Սրբազանէն որպէս զի իր եղբայրական ողջոյնները փոխանցէ Ամենայն Հայոց Կաթողիկոսին: Ըսաւ նաեւ որ Հայաստան իր այցելութեան շրջանին, իբրեւ հիւր Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի, սիրալիր եւ ջերմ ընդունելութեան արժանացած է Ամենայն Հայոց Հայրապետին կողմէ, եւ կը սպասէ որ Նորին Սրբութիւնը Կ. Պոլիս այցելէ՝ որպէս զի իր կարգին փոխադարձեւ նոյնափախ ընդունելութիւն մը:

Առաջնորդ Գերշ. Տ. Խաժակ արքեպս. Պարսամեան հետաքրքրուեցաւ Կ. Պոլսոյ Աթոռի Պատրիարք Ամեն. Տ. Մեսրոպ արքեպս. Մութաֆեանի առողջական վիճակով: Վերջերս ան ինքնաշարժի արկածի ենթարկուած էր: Տիեզերական Պատրիարքը ըսաւ որ Մեսրոպ Պատրիարքի առողջական վիճակը լաւ է եւ շեշտեց որ երկու Աթոռներու միջեւ սերտ կապ եւ յարաբերութիւն գոյութիւն ունի: